



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

թիվ 537-Ա

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 17.02.2008թ-ի
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՎԱԳ, ՄԻՋԻՆ ԵՎ
ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
/ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ/ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» թիվ 3357-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության նախագահի հանձնարարականի համաձայն CRECO-ի 4-րդ առաջարկությամբ՝ ՀՀ ոստիկանության ծառայողների համար կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի թեմաներով վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու և նշված հարցերի ուսումնասիրությանն ուղղված արդիական ուսումնական ծրագիր մշակելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ոստիկանության պետի 17.02.2008թ.-ի «ՀՀ ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին վերապատրաստման /որակավորման/ դասընթացներ կազմակերպելու մասին» թիվ 3357-Ա հրամանով հաստատված 2009թ-ի տարեկան պլան-գրաֆիկներում՝ ՀՀ ոստիկանության ներքոթվարկյալ գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների ուսումնառության ժամկետներն ավելացնել ևս չորս օրով.

1.1 ՀՀ ոստիկանության ակադեմիայում.

- վարչության պետի օպերատիվ գծով տեղակալներ և բաժնի պետեր,
- բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալներ, քրեական հետախուզության /տարածքային/ և անչափահասների գործերով բաժանմունքի պետեր,
- ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ,
- հետաքննության գծով ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ:

1.2 ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնում.

- քրեական հետախուզության միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ:

2. ՀՀ ոստիկանության ակադեմիայի և ուսումնական կենտրոնի պետերին.

- կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի թեմաներով վերապատրաստման /որակավորման/ դասընթացներ կազմակերպելու նպատակով ուսումնական ծրագրերում կատարել լրացումներ՝ թեմատիկ պլանը նախապես համաձայնեցնելով ՀՀ ոստիկանության շահագրգիռ ծառայությունների հետ:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ**

Ա.ՄԱՐԳՍՅԱՆ

« 05 « 03. 2009թ.